Safe.am Safe.am

Բաց դաս «Ապահով համացանց 2016»

Դասը վարեց՝ ինֆորմատիկայի ուսուցչուհի Ա. Ի. Հակոբյանը Երևանի Նվեր Սաֆարյանի անվան թ.164 հիմնական դպրոց

Դասի նպատակը՝

- Դաստիարակել գրագետ և պատասխանատու համացանցի օգտատեր
- Համախմբել ծնողներին, ուսուցիչներին, երեխաներին համացան ցային անվտանգության հարցերի շուրջ:
- Դասղեկների և ծնողների համար ստեղծել բաց միջավայր երեխաների հետ համացանցային անվտանգության մասին զրույցներ վարելու համար:

Դասի խնդիրներ՝

Բարձրացնել, համացանցի օգտագործման արդյունքում առաջացող տհաճ ու վտանգավոր իրավիճակներում գրագետ լուծումների գոյության, իրազեկման մակարդակը:

Դասի մեթոդը՝ միջդասարանային խաղ-մրցույթ:

Մասնակիցներ՝ 6ա, 6բ, 6գ, 6ռ դասարանների աշակերտներ, դասղեկներ, ծնողական համայնքի ներկայացուցիչներ: 9-րդ դասարանի աշակերտներ:

Գահատման չափանիշը՝ փոքր և մեծ Like:

Դասի տևողությունը՝ 90 րոպե:

Դասի ընթացքը՝

- Ուսուցչի խոսք՝

Հասարակության զարգացման արդի շրջանում համակարգիչը աշակերտի համար դարձել է և՝ ընկեր, և՝ օգնական, և՝ ինչու չէ ուսուցիչ: Արագ ինտերնետի հասանելիությունը երեխաների համար ստեղծում է շփման և ինքնազարգացման լայն հնարավորություններ: Մինչդեռ, համակարգչի հետ աշխատելիս, մասնավորապես համացանցից օգտվելիս առաջանում են մի շարք խնդիրներ, որոնք բացասական են ազդում երեխաների ֆիզիկական, բարոյական և հոգևոր զարգացման վրա:

Համակարգչի բացասական փոխազդեցությունը հնարավոր է հաղթահարել միայն ուսուցիչների, ծնողների և հենց երեխաների համատեղ ջանքերով:

- 9-րդ դասարանի աշակերտները ներկայացրեցին հակավիրուսային ծրագրերի դերն ու նշանակությունը և տեսակները:

- 6-րդ դասարանցիները ներկաներին տեղեկացրեցին այն հակավիրուսային ծրագրերը, որոնց անվան տակ իրենք հանդես էին գալիս, որպես անվտանգ համացանցի դեսպան:



Լավագուն ձևով ներկայացնող թիմը ժուրիի՝ դպրոցի ադմինիստրացիայի կողմից արժանացավ մեծ Like-ի և ստացավ հնարավորություն առաջինը ընտրելու վիկտորինայի հարցը: Հարսաշարը բաղկացած է երեք բաժնից՝

Safe.am Safe.am

Օ՛իմ համացանց

1. Լրացրեք բաց թողնված բառերը. Համացանցում կարելի է գտնել տարատեսակ տեղեկություններ՝

Պատասխան՝ Նորություններ, Հոդվածներ, Նկարներ, Երգեր, Տեսանյութեր, Ծրագրեր

2. Այդ նշանը առաջին անգամ օգտագործել է 1971թ., և ունեցել է տարբեր անվանումներ՝ «պոչիկ» , «գորտնուկ» , «պարուրա» : Հիմա այն «մարդկանց ընկերն է » :

Պատասխան՝ @

3. Ի՞նչպես է կոչվում համաշխարհային բաց հանրագիտարանը, որը կարող է խմբագրել յուրաքանչյուր ոք:

Պատասխան՝ Wikipedia

4. Ո՞ր երկրում են առաջինը օգտվել համացանցից:

Պատասխան՝ ԱՄՆ

5. Ո՞ր կայքերից ճիշտ օգտվել առցանց առևտուր կատարելիս:

Պատասխան՝ Այն կայքերից , որոնք սկսվում են http:// կամ https://

6. Բոլորս ծանոթ ենք համակարգչի մոտ աշխատելու կանոններին: Իսկ ի՞նչ կապ ունի այս ծաղրածուի նկարը այդ կանոնների հետ:

Պատասխան՝ Եթե Համակարգչի մոտ երկար աշխատելուց հետո քթի ծայրով ուրվագծենք ծախրածուին, աչքերը կհանգստանան:

7. Հարց ծնողներին: Ի՞նչ հնարք գիտեք երեխային անցակալի ֆայլերից պաշտպանելու համար:

Պատասխան՝ Parental controls (ծնողական հսկողություն):

Խորհուրդներ

Խորհուրդ 1. Այլագրային աղյուսակով վերծանեք հետևյալ գլուխկոտրուկը, եթե այբուբենի յուրաքանչյուր տառին համապատասխանեցված է մեկ թվազույգ, որոնցից առաջինը ստորև ներկայացված սյունակի համարն է, իսկ երկրորդը՝ տողի համարը.

(5,1)(6,3)(2,1)(15,3) (5,1) (3,3) (15,3) (12,3) (3,1)(5,3) (1,1) (3,1) (11,2) (6,3) (1,2) (8,3) (7,2) (15,3)
(5,1) (7,2) (15,3) (11,1) (9,2) (5,3) (5,1) (6,3) (9,2) (5,1) (5,3) (14,2) (15,3) (3,2) (1,1) (6,3) (3,1) (8,3)
(7,2) (15,3) (5,1) (7,2) (15,3) (9,2) (6,3) (1,1) (15,3) (2,2) (1,1) (9,2) (11,2) (9,2) (9,2) (5,1) (6,3) (8,1)
(15,3) (1,1) (7,2) (5,1) (9,2) (8,3) (6,3) (5,1) (10,3) (14,2) (15,3) (5,3) (1,1) (9,2) (8,1) (14,2) (15,3) (4,1)
(13,2) (6,3) (11,2) (7,3) (8,3) (7,2) (15,3) (11,3) (15,3) (8,1) (9,2) (2,2) (5,1) (6,3) (9,2) (5,1) (6,3) (11,1)
(3,3) (15,3) (10,2) (6,3) (1,3) (1,1) (13,2) (1,1) (5,3) (8,3) (7,2) (14,3)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	ա	բ	գ	դ	ե	զ	է	Ը	թ	ժ	ի	լ	խ	՝	~
2	ծ	կ	հ	ձ	ղ	ճ	մ	Յ	ն	շ	ո	չ	պ	,	-
3	ջ	ռ	ս	վ	տ	ր	ց	Ու	փ	ք	և	օ	ֆ	:	բացատ

Պատասխան՝ Երբ ես օգտագործում եմ ինտերնետ, հարգում եմ նրա կանոնները ամեմնուրեք, տանը, դպրոցում և ընկերներիս շրջապատում:

Խորհուրդ 2. -Ուռաաաա՜, ես բարի փերիից նամակ եմ ստացել:
-Ի՞սկ դու նրան ճանաչում ես, նա ո՞րտեղից գիտի քո հասցեն:

Պատասխան - խորհուրդ՝ Անծանոթ հասցեներից ստացված նամակները պետք չէ բացել, նրանք կարող են վիրուսներ պարունակել:

Խորհուրդ 3. - Մեր տան հասցեն մոռացել եմ, կարող ես հուշել, թե չէ չեմ կարողանում գրանցվել կայքում
- Ի՞նչ է, նրանք մեզ հյուր են գալու

Պատասխան - խորհուրդ՝ Կայքում գրանցվելիս պետք չէ նշել անձնական տվյալներ՝ հասցե, հեռախոսի համար :

Խորհուրդ 4. - Այնքա՜ն գեղեցիկ է, համակարգիչս անընդհատ թարթող, փայլուն պատկեր է ցույց տալիս:
- Ոչ մի ուրախանալու բան չկա, ուրիշ ոչինչ էլ համակարգիչդ ցույց չի տա:

Պատասխան - խորհուրդ՝ Համակարգիչը պետք է պաշտպանված լինի հակավիրուսային ծրագրով:

Խորհուրդ 5. - Այսօր իմ ինտերնետային ընկերը հրավիրել է հանդիպման:
- Մի գնա:

Պատասխան - խորհուրդ՝ Երբեք միայնակ մի գնացեք “ինտերնետային ընկերենների” հետ հանդիպման առանց ծնողներին տեղյակ պահելու:

Ցանցում հայտնվող մարդիկ միշտ չէ, որ այն են, ինչպես ներկայանում են:

Խորհուրդ 6. - Ուռռռա՛, ես հազարերորդ հաճախորդն եմ այս կայքի և շահել եմ ավտոմեքենա, մնում է միայն այս սեղմակը սեղմել և շահումը մերն է :

- Խորհուրդ չեմ տա, ես այդպես չէի անի:

Պատասխան - խորհուրդ՝ Խաբեության այս տեսակը կոչվում է Phishing, որը անգլերենից թարգմանած նշանակում է՝ ձկնորսություն: Անհատին հնարքների միջոցով թյուրիմածության մեջ գցելով, ստիպում են նրան կամավոր տրամադրել իր անձնական տվյալները:

Իրավիճակներ

Իրավիճակ 1. Բնագիտության դասին ուսուցչուհին հանձնարարել է համացանցում գտնել և ներբեռնել համաստեղությունների վերաբերյալ նկարներ Վահանը հաճույքով կատարում էր հանձնարարությունը և նկարը ներբռեռնելուց Էկրանին հայտնվեց հաղորդագրություն , որ գործողությունը շարունակելու համար պետք է նշված համարին SMS ուղղարկել: Ի՞նչպես վարվի Վահանը:

Պատասխան՝ Համացանցում ստուգի նշված համարը:

Իրավիճակ 2. Վահանը այսօր դասարանում բջջային հեռախոսով նկարներ է դասարանցիներին և ուզում է այդ նկարները հրապարակել համա-ցանցում: Ու՞նի Վահանը այդ իրավունքը , թե՛ ոչ:

Պատասխան՝ Ունի, միայն դասարանցիների համաձայնությամբ :

Հարց դասղեկին 1. Դասարանում իրարանցում է տիրում, բոլորը մեղադրում են Կարինեին , որ նա Instagram-ի իր էջում տեղադրել է դասընկերոջ նկարը և հայտարարել, որ նա վաճառվում է 5000$ առժողությամբ և նշել նրա հեռախոսահամարը: Կարինեն տարակուսանքի մեջ է՝ նա էլ ասում է, որ մի օր հեռախոսը թողել էր նստարանի տակ, ընդ որում չփակելով իր Instagrami պրոֆիլը, ու հիմա էլ չի կարողանում այն բացել, քանի որ մոռացել է ծածկագիրը: Ա՞ր դյոք Կարինեն սխալ է և ի՞նչ քայլերի կդիմի դասղեկը:

Պատասխան՝ Կարինեի սխալը այն է, որ չի կարելի հեռախոսը թողնել հեռու քեզանից և հատկաես սոց. Կայքի պրոֆիլը բաց: Իսկ նկարը պետք է անհապաղ հեռացնել, վերականգնելով ծածկագիրը:

Հարց դասղեկին 2. Երեկոյան ուշ Նարինեն շփվում է սոց կայքում ընկերուհու հետ, պատմում է իր խիստ անձնական գաղտնիքը: Հաջորդ օրը ամբողջ դպրոցը խոսում է այդ մասին: Սակայն ընկերուհին հավաստում է , որ նա տեղյակ չի և Նարինեի այդ գագաղտնիքի մասին լսում է առաջին անգամ: Ո՞վ է ընկերուհիներից սխալ, և որը կլինեն դասղեկի քայլերը:

Պատասխան՝ Երկու ընկերուհին էլ սխալ են, մեկը՝ որ ծածկագրի գաղտնիությունը չի ապահովել, իսկ մյուսը, որ հրապարակել է խիստ անձնական գաղտնիքը:

Խաղի ավարտին հաղթող թիմը ստացավ պատվոգիր, իսկ մյուս դասարանները և ակտիվ մասնակիցները՝ «Ապահով համացանցի» դեսպանի հավաստագիր: